Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-668-14.07.2009,07.09.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «քննությունն» բառը փոխարինել «վարումն» բառով, իսկ «օրենսգրքով» բառից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում.

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝

1) հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60 - օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե նա առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը.

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը).

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը).

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

2) Սեփական նախաձեռնությամբ՝ (կամավոր սնանկության դիմում) եթե պարտապանի պարտավորությունները օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն): Ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա օրենքի համաձայն բռնագանձում չի կարող տարածվել:».

2) Ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 4. Սնանկության գործերի առարկայական ընդդատությունը

1. Սնանկության գործերի վարումն իրականացվում է ընդհանուր իրավասության դատարաններում (այսուհետ՝ դատարան):

2. Դատարանում սնանկության գործերը վարվում են դատավորի կողմից միանձնյա:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

« 1. Պարտապանը սեփական սնանկության ճանաչման նպատակով պարտավոր է դիմել դատարան, եթե առկա են սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված հիմքերը:»:

2) 3-րդ մասում «տասնօրյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում, պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում, պարզվում է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս քան 60 օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:»

Գույքի անբավարարության հիմքով կատարողական վարույթը կասեցնելու որոշումը 2 աշխատանքային օրվա ընթացքում դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից հրապարակվում է «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան էլեկտրոնային կայք էջում:

Եթե կատարողական վարույթը կասեցնելու որոշումը հրապարակելուց հետո ի հայտ են գալիս նոր պարտատերեր կամ արդեն հայտնի պարտատերը կամ պարտապանը դիմում են հարկադիր կատարողին կատարողական վարույթը չվերսկսելու դիմումով, ապա հարկադիր կատարողն առաջարկում է նրանց սնանկության հայց ներկայացնել դատարան և կատարողական վարույթը չի վերսկսում:

Եթե սույն մասով սահմանված ժամկետում պարտապանի կամ պարտատիրոջ կողմից սնանկության հայց չի ներկայացվում դատարան կամ ի հայտ չեն գալիս նոր պարտատերեր, ապա հարկադիր կատարողը վերսկսում է կատարման վարույթը:

Սույն մասի իմաստով գույքն անբավարար է համարվում, եթե կատարողական վարույթով (վարույթներով) իրացման ենթակա արգելանք դրված եւ գնահատված գույքի առաջիկա իրացման գնահատված կամ մեկնարկային գինն ավելի ցածր է պահանջի (պահանջների) չափից: Պահանջի

(պահանջների) չափի մեջ հաշվարկվում են նաեւ կատարողական վարույթի իրականացման հետ կապված ծախսերը եւ գույքի իրացումից ծագող անուղղակի հարկային պարտավորությունները:».

2) 3-րդ մասում «և երկրորդ մասերում» բառերը փոխարինել «մասում» բառով, իսկ «Հայաստանի Հանրապետության դատախազության մասին օրենքով եւ այլ օրենքներով սահմանված կարգով» բառերը փոխարինել «սույն օրենքով սահմանված կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է տվյալ անձին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելուց ձեռնպահ մնալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը» բառերով:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածում.

1) 1-ին մասի բ) կետն ուժը կորցրած ճանաչել:

2) 3-րդ մասի 1-ին պարբերությունում «ներկայացրած» բառից առաջ լրացնել «համատեղ» բառն, իսկ 2-րդ պարբերությունում «մինչև դիմումը վարույթ ընդունելը» բառերն փոխարինել «մինչև վճիռ կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալը» բառերը.

3) լրացնել նոր 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«4. Դիմումը հետ վերցնելու դեպքում տվյալ դիմումի հիման վրա դատական վարույթ ընդունված սնանկության գործը կարճվում է:»:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում լրացնել նոր «գ)» կետ հետևյալ բովանդակությամբ.

«գ) «առաջարկ՝ ժամանակավոր կառավարչի թեկնածության կամ համաձայնություն՝ ընտրությունը դատարանին թողնելու վերաբերյալ:»:

2) 3-րդ մասում լրացնել նոր «գ)» կետ հետևյալ բովանդակությամբ

«գ) «դիմումում ժամանակավոր կառավարչի թեկնածության առաջարկ ներկայացնելու դեպքում՝ այդ թեկնածուի վերաբերյալ սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջները հիմնավորող փաստաթղթերի պատճենները և սնանկության գործին մասնակցող անձանց պատճառված վնասի համար թեկնածուի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրական պոլիսը:».

3) 4-րդ մասում «դիմումատուի» բառը փոխարինել «դիմողի» բառով:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածում.

1) 1-ին մասի դ) կետում «անդամների» բառը փոխարինել «մասնակիցների (լիակատար ընկերների)» բառերով:

2) 3-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Սույն հոդվածով նախատեսված փաստաթղերը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու հետ կապված բոլոր ռիսկերը կրում է պարտապանը:»:

Հոդված 9. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «միաժամանակ» բառից հետո լրացնել «սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը:

Հոդված 10. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «օրը» բառը փոխարինել «օրվանից եռօրյա ժամկետում» բառերով.

2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Դիմումի ընդունումը մերժելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:

3) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Որոշումը վերացվելու դեպքում դիմումը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը:»:

Հոդված 11. Օրենքի 15-րդ հոդվածում.

1) 1-ին մասի «բ» կետում «պահանջներ» բառից հետո լրացնել «բացառությամբ եթե պարտապանները ամուսիններ են և դիմողի նկատմամբ օրենքի ուժով համապարտ են» բառերը.

2) 2-րդ մասում «օրը» բառը փոխարինել «օրվանից եռօրյա ժամկետում» բառերով.

3) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Դիմումը վերադարձնելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:

4) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Որոշումը վերացվելու դեպքում դիմումը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը:»:

Հոդված 12. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Հարկադրված սնանկության» բառերից հետո լրացնել «վերաբերյալ» բառը, «7 օրվա» բառերը փոխարինել «15 օրվա» բառերով, «երկրորդ մասով» բառերը փոխարինել «2-րդ մասի 2-րդ կետով» բառերով, իսկ «ութերորդ օրը» բառերը «16-րդ օրը» բառերով».

2) 2-րդ մասում «7 օրվա» բառերը փոխարինել «15 օրվա» բառերով.

3) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքը լրացնել նոր 17.1 հոդված հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 17.1 Դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերի ուժի մեջ մտնելը

1. Դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերն (որոշումները, վճիռները) օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:»:

Հոդված 15. Օրենքի 18-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 18. Կողմերի հաշտության համաձայնությունը

1. Կողմերը, մինչև դատավորի վճիռ կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալը կարող են կնքել հաշտության համաձայնություն:

2. Կողմերի միջև կայացված հաշտության համաձայնությունը ձեւակերպվում է գրավոր:

3. Դատարանը, նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը, կողմերին պարզաբանում է դրա դատավարական հետեւանքները:

4. Դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձանց իրավունքները եւ օրինական շահերը:

5. Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո հաշտություն կնքելու բոլոր պարտատերերի իրավունքը կարող է իրականացվել բացառապես սույն օրենքի պահանջներին համապատասխան առողջացման ծրագրի հաստատման միջոցով: Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո

առողջացման ծրագրի շրջանակներում առանձին պարտատիրոջ և պարտապանի միջև հաշտություն կնքելու իրավունքը կարող է իրականացվել տվյալ պարտատիրոջ կողմից միակողմանի պարտքի լրիվ կամ մասնակի ներմամբ կամ կատարման ժամկետի միակողմանի երկարաձգմամբ:»:

Հոդված 16. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) վերնագրում «և» բառը փոխարինել «կամ սնանկ ճանաչելու» բառերով.

2) 1-ին մասի զ) կետից հանել «հարկադիր կատարողը,» բառերը:

3) 2-րդ մասի վերջին պարբերությունում լրացնել «, բացառությամբ հարկերի և պարտադիր վճարների գերավճարների առկայությունը պարզելուն ուղղված ուսումնասիրությունների»:

4) 6-րդ մասում «մերժելու» բառից հետո լրացնել «կամ գործի վարույթը կարճելու» բառերը, իսկ «և հինգերորդ մասերով» բառերը փոխարինել «մասով նախատեսված սահմանափակումները և հինգերորդ մասով» բառերով:

Հոդված 17. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով: Վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնհինգ օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:».

2) 2-րդ մասից հանել «և հարկադիր կատարողը՝ վերջինիս կողմից դիմում ներկայացնելու դեպքում» բառերը.

3) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանք կայացվելուց հետո՝ տասնհինգ օրյա ժամկետում, վերաքննության կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:»:

Հոդված 18. Օրենքի 21-րդ հոդվածում

1) 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Ժամանակավոր կառավարիչ կարող է նշանակվել պետական լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով՝ որպես սնանկության կառավարիչ որակավորված և կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության անդամ հանդիսացող այն ֆիզիկական անձը, որը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր:»:

2) 4-րդ մասից հանել «Պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժվելու, ինչպես նաեւ այն դեպքում,» բառերը, իսկ «երբ» բառը փոխարինել «Երբ» բառով:

Հոդված 19. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 22. Կառավարչի ընտրությունը և նշանակումը

1. Կառավարիչ կարող է նշանակվել պետական լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով՝ որպես սնանկության կառավարիչ որակավորված և կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության անդամ հանդիսացող

այն ֆիզիկական անձը, որը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր:»:

2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի կայացումից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտապանը և գործին որպես դիմող մասնակցած պարտատերը, իսկ եթե պարտատերերը մի քանիսն են, ապա (բոլոր պարտատերերի համաձայնության դեպքում) պարտատերերը փոխադարձ համաձայնության գալով՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացրած դատավորին է (են) ներկայացնում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին համապատասխանող իրենց նախընտրած կառավարչի թեկնածությունը և սնանկության գործին մասնակցող անձանց պատճառված վնասի համար թեկնածուի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրական պոլիսը:

3. Եթե պարտապանը և պարտատերը (պարտատերերը) կառավարչի թեկնածության վերաբերյալ ձեռք չեն բերում փոխադարձ համաձայնություն կամ եթե պարտատերը (պարտատերերը) կառավարչի թեկնածության վերաբերյալ առաջարկ չի (չեն) ներկայացնում կամ գործին որպես դիմող մասնակցած մի քանի պարտատերեր թեկնածուի հարցում ձեռք չեն բերում փոխադարձ համաձայնություն կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում չեն ներկայացնում իրենց նախընտրած կառավարչի թեկնածությունը կամ նրանց ներկայացրած կառավարչի թեկնածուն չի բավարարում սույն հոդվածի 1-ին մասի պահանջներին կամ նրանց նախընտրած կառավարչի թեկնածուի վրա տարածվում են սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ապա դատարանը որպես կառավարիչ չի նշանակում պարտատիրոջ (պարտատերերի) կողմից ներկայացված կառավարչի թեկնածուին, և 1 աշխատանքային օրվա ընթացքում կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիր է ներկայացնում կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը:

4. Կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը պահանջագիրը ստանալուց հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում դատարան է ներկայացնում կառավարչի թեկնածություն: Կառավարչի թեկնածուի ընտրության կարգը և չափանիշները սահմանում է կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը՝ համաձայնեցնելով ՀՀ արդարադատության նախարարության հետ:

5. Կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը ստանալով կառավարիչ ներկայացնելու դատարանի պահանջագիրը, այդ մասին նույն օրը պարտավոր է տեղեկացնել կազմակերպության անդամ հանդիսացող կառավարիչներին՝ հեռախոսային, փոստային կապով և հայտարարություն տալով կազմակերպության էլեկտրոնային կայքում, որում ներառվում են նաև կազմակերպության անդամ հանդիսացող բոլոր կառավարիչների տվյալները: Այն կառավարիչները, ովքեր ցանկություն են հայտնում տվյալ գործով հանդես գալ որպես կառավարիչ, երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող են գրանցվել կազմակերպության էլեկտրոնային կայքում կամ գրավոր հայտ ներկայացնել կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություն: Կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը էլեկտրոնային կայքում գրանցված և հայտ ներկայացրած կառավարիչների տվյալները ներառում է համակարգչի մեջ և հատուկ ծրագրի միջոցով ընտրում է մեկ կառավարչի թեկնածություն և հաջորդող աշխատանքային օրվա մինչև ժամը տասներկուսը դատարան է ներկայացնում տվյալ գործով կառավարչի թեկնածությունը՝ այդ մասին անհապաղ տեղյակ պահելով ընտրված կառավարչին:

6. Եթե որևէ կառավարիչ ցանկություն չի հայտնում տվյալ գործը վարելու համար, ապա կազմակերպությունը, տարածքային սկզբունքից ելնելով, համակարգչում ներառում է տվյալ տարածքում գործունեություն իրականացնելու համար գրանցված իր անդամ հանդիսացող բոլոր

կառավարիչների տվյալները և համակարգչային ծրագրի միջոցով ընտրում է մեկ կառավարչի թեկնածություն և հաջորդող աշխատանքային օրվա մինչև ժամը տասներկուսը դատարան է ներկայացնում ընտրված կառավարչի թեկնածությունը՝ այդ մասին անհապաղ տեղյակ պահելով կառավարչին:

7. Կառավարիչը կարող է հրաժարվել կառավարչի պարտականությունները ստանձնելուց միայն այն դեպքում, երբ նրա գործունեությանը խոչընդոտում են անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորային) հանգամանքները: Եթե կառավարիչ նշանակված անձը հրաժարվում է կառավարչի պարտականություններն ստանձնելուց,իսկ գործով որպես դիմող մասնակցած պարտատերը (պարտատերերը) այդ ընթացքում նոր թեկնածու չեն ներկայացրել, ապա դատարանը կառավարիչ է նշանակում ինքնակարգավորվող կազմակերպության ներկայացրած այլ թեկնածուի, որը ընտրվում է կազմակերպության կողմից սույն հոդվածի 4-րդ կամ 5-րդ մասերով նախատեսված կարգով:

8. Եթե կառավարչի հրաժարումն անհիմն է, ապա ինքնակարգավորվող կազմակերպությունը կամ դատարանն այդ մասին տեղյակ են պահում պետական լիազոր մարմնին:»:

Հոդված 20. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «համար» բառից հետո լրացնել «պետական լիազոր մարմնի կողմից ստացել է սնանկության գործերով կառավարչի որակավորում և».

2) 2-րդ մասի ա/ կետում «նկատմամբ» բառը փոխարինել «հետ» բառով:

3) 2-րդ մասի «դ» կետում «մարված» բառից հետո լրացնել «կամ հանված» բառերը.

2) 2-րդ մասի «թ» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«թ) չունի սնանկության կառավարչի որակավորում կամ չի հանդիսանում կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության անդամ կամ հաշվառված չէ որպես անհատ ձեռնարկատեր.

3) 2-րդ մասը լրացնել նոր «ժ» կետով հետևյալ բովանդակությամբ.

«ժ) սահմանված ժամկետում չի կատարել իր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը:»:

Հոդված 21. Օրենքի 24-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 22. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության առաջարկած կառավարիչը դատարանի կողմից սնանկության գործով որպես կառավարիչ նշանակվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ապահովագրել իր քաղաքացիական պատասխանատվությունը սնանկության գործին մասնակցող անձանց պատճառված վնասի համար: Ապահովագրական գումարի չափը չպետք է պակաս լինի նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից: Եթե կառավարիչը սահմանված ժամկետում չի կատարում իր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը, ապա դատարանը որոշում է կայացնում տվյալ կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին և 1 աշխատանքային օրվա ընթացքում դիմում է կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը նոր կառավարչի թեկնածություն ներկայացնելու համար: Կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով դատարանին է ներկայացնում նոր կառավարչի թեկնածությունը:»:

Հոդված 23. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) «20» թվից հետո լրացնել «պետական լիազոր մարմնի կողմից որակավորված» բառերը.

2) 2-րդ մասից հանել «անդամների քաղաքացիական պատասխանատվության համապատասխան չափով ապահովագրումն ապացուցող տեղեկություններ» բառերը.

3) 6-րդ մասի դ) կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 24. Օրենքի 27-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Անդամները պարբերական վճարներ են կատարում անդամության համար, որի չափը որոշվում է կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության անդամների ընդհանուր ժողովում:».

2) 2-րդ մասը լրացնել նոր զ) կետով հետևյալ բովանդակությամբ.

«զ) ինքնակարգավորվող կազմակերպության անդամվճարի չափը սահմանելը:».

3) 4-րդ մասի վերջին նախադասությունում «ղեկավարը» բառից հետո լրացնել «պետք է ունենա պետական լիազոր մարմնի կողմից տրված որակավորման վկայական, սակայն» բառերը, իսկ «որևէ սնանկության գործով կառավարիչ կամ» բառերը հանել

4) 5-րդ մասում «անդամը» բառից հետո լրացնել «պետք է ունենա պետական լիազոր մարմնի կողմից տրված որակավորման վկայական և» բառերը:

Հոդված 25. Օրենքի 29-րդ հոդվածում.

1) 1-ին մասի «գ» կետում «հանդես է եկել որպես հայցվոր» բառերը փոխարինել «հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող» բառերով.

2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Յուրաքանչյուր կառավարիչ պետք է ունենա իր անուն- ազգանունով կնիք:»:

Հոդված 26. Օրենքի 30-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «գոյացած միջոցներից» բառից հետո լրացնել «չներառելով իրացումից ստացված անուղղակի հարկերի գումարը» բառերով.

2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված կարգով վաղաժամկետ ազատված կառավարչի աշխատած ժամանակաշրջանին համապատասխան վարձատրության տրամադրման և վարձատրության չափին վերաբերող հարցերը որոշում է դատարանը աշխատաժամանակին և կատարած աշխատանքին համապատասխան՝ աշխատանքային օրենսդրության սկզբունքներից ելնելով:»:

Հոդված 27. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը «կարող են» բառերից հետո լրացնել «սնանկության գործը վարող» բառերը:

Հոդված 28. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Դատավորն իր նախաձեռնությամբ, պարտատերերի խորհրդի կամ ժողովի կամ պարտատիրոջ կամ պարտապանի միջնորդությամբ պետք է վաղաժամկետ դադարեցնի կառավարչի լիազորությունները, եթե վերջինս չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում սույն օրենքով սահմանված իր լիազորությունները կամ սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի կատարում իր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը: Դատավորի կողմից կառավարչի պարտականությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

որոշում ընդունելու դեպքում, դատավորը այդ մասին անհապաղ տեղեկացնում է տվյալ կառավարչին, կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը, պարտապանին և պարտատերերին: Նոր կառավարչի նշանակումը կատարվում է սույն օրենքի 22 հոդվածով սահմանված կարգով:».

2) լրացնել նոր 1.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Կառավարչի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին դատարանի որոշումը կամ սնանկության գործը վարելուց անհիմն հրաժարվելը կամ սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը չկատարելը հիմք է լիազոր մարմնի կողմից կառավարչի որակավորման վկայականը հետ վերցնելու համար:».

3) 3-րդ մասում «որոշումը» բառից հետո լրացնել «կամ սնանկության գործը վարելուց անհիմն հրաժարվելու կամ սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը չկատարելու,» բառերը:

Հոդված 29. Օրենքի 38-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությունում «դատարան» բառը փոխարինել «գործը վարող դատավորին» բառերով:

Հոդված 30. Օրենքի 39-րդ հոդվածում.

1) 1-ին մասի «ա» կետում «բավարարում տալը» բառերից հետո լրացնել «,ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը» բառերով:

2) 2-րդ մասի «բ» և «գ» կետերում «պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող» բառերը փոխարինել «պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով» բառերը:

Հոդված 31. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասում «կատարված» բառից հետո լրացնել «,սակայն» բառը:

Հոդված 32. Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Առանց պարտատիրոջ գրավոր համաձայնության, ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող նախատեսել այդ պարտատիրոջ պահանջների բավարարման այլ հերթականություն, քան նախատեսված է սույն օրենքով: Եթե տվյալ պարտատերը գրավոր այլ համաձայնություն չի տվել, ապա պարտատերերից որևէ մեկը չպետք է ֆինանսական առողջացման ծրագրի նախատեսված արդյունքում նվազ նպաստավոր պայմաններում հայտնվի, քան եթե պարտապանը լուծարվեր:»:

Հոդված 33. Օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությունում «Խորհրդի» բառից հետո լրացնել «կամ ժողովի» բառերը:

Հոդված 34. Օրենքի 76-րդ հոդվածում.

1) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո գույքը (ներառյալ դեբիտորական պարտքերը, վճարային պահանջի իրավունք վկայող արժեթղթերը և այլ պահանջի իրավունքները) չիրացվելու դեպքում տվյալ պահի դրությամբ բավարարում չստացած՝ պահանջների բավարարման առաջիկա հերթում ընդգրկված պարտատերերը իրավունք ունեն պահանջել կառավարչից՝ չկայացած աճուրդի մեկնարկային գնով գույքը հանձնել իրենց, որպես տվյալ խմբի բոլոր պարտատերերի ընդհանուր բաժնային սեփականություն, ըստ իրենց գրանցված պահանջներին համամասնական բաժինների, պայմանով, որ պարտատերերը նախքան գնման գործարքի կնքումն

անվճարունակության հաշվին կվճարեն իրացումից ծագող անուղղակի հարկերը, տվյալ գույքի պահպանության, իրավունքի ճանաչման (գրանցման), գնահատման ու իրացման համար կատարված ծախսերը, կառավարչի հավելյալ վարձատրությունը 1 տոկոսի չափով և գույքի մեկնարկային գնի ու այդ պարտատերի մասով գրանցված պահանջների գումարի տարբերությունը, եթե առկա է տարբերություն:».

2) լրացնել նոր 7-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«7. Կառավարիչը պարտավոր է պարտապանի գույքի կազմում ընդգրկված պահանջի իրավունքների (դեբիտորական պարտքերը, վճարային պահանջի իրավունք վկայող արժեթղթերը (պարտատոմսեր, մուրհակներ և այլն) աճուրդները սկսել ոչ ուշ քան լուծարման որոշումից 2 ամիս հետո և 15-օրյա պարբերականությամբ յուրաքանչյուր հերթական աճուրդը կազմակերպել չկայացած աճուրդի մեկնարկային գնի 10 տոկոս նվազեցմամբ:».

3) լրացնել նոր 8-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«8. Պարտապանին պատկանող գույքի վաճառքը իրականացվում է «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 35. Օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունում «Խորհրդի» բառից հետո լրացնել «կամ ժողովի» բառերը:

Հոդված 36. Օրենքի 82-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«5. Եթե առկա միջոցները բավարար չեն սույն հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատողների աշխատավարձը ամբողջությամբ վճարելու համար, ապա աշխատավարձի վճարումը կատարվում է համամասնորեն կամ աշխատավարձի վճարումը իրականացվում է՝ հիմք ընդունելով աշխատավարձի չափի մեծությունը՝ փոքրից դեպի ավելի մեծ առաջնահերթությամբ:»:

Հոդված 37. Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը «հարգելիությունը» բառից հետո լրացնել «և պահանջների հիմնավորվածությունը» բառերը, իսկ չորրորդ նախադասությունում «հարգելիության» բառից հետո լրացնել «և պահանջների հիմնավորվածության» բառերը:

Հոդված 38. Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սնանկության գործի ցանկացած փուլում կառավարչի կամ պարտապանի միջնորդության հիման վրա գործը կարող է ավարտվել, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են (այդ թվում՝ հիմնադիրների, մասնակիցների, բաժնետերերի, փայատերերի կողմից պարտապանի պարտավորությունների կատարման համար սնանկության հատուկ հաշվին անհատույց դրամական միջոցներ փոխանցելու միջոցով), կամ նրանք հրաժարվել են իրենց պահանջներից կամ երկարաձգել են դրանց կատարման ժամկետը, կամ պահանջներ չեն ներկայացվել, որի արդյունքում պարտավորությունների չափը նվազել է նվազագույն աշխատավարձի հազարապատիկից և առկա չէ որևէ պարտավորության գծով 60 օրից ավելի կետանց: Կառավարչի հաշվետվությունը եւ վերջնական հաշվեկշիռը քննարկվում և դատարանի կողմից վճիռ է կայացվում սույն օրենքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 39. Օրենքի 93-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 40. Օրենքի 101 հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Գույքի և եկամուտների մասին հայտարարագիրը ներկայացվում է օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 41. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 106-րդ հոդվածի 1-ին մասը:

Հոդված 42. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ սնանկության կառավարչի գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր և ստանալ որակավորման վկայական՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի 18 և 19 հոդվածների պահանջները՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու մասով, գործը վարող կառավարիչների նկատմամբ կիրառվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

4. Սույն օրենքի 1-ին, 3-րդ, 6-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 30-րդ, 33-րդ հոդվածների դրույթները տարածվում նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ դատարանում առկա սնանկության գործերի դատական վարույթի վրա:

5. Սույն օրենքը չունի հետադարձ ուժ և հիմք չէ մինչև սույն օրենքի ընդունումը. ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման համար:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Սնանկության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասինե, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասինե և «Պետական տուրքի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասինե
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից հանվել են սնանկության գործերով կառավարիչների լիցենզավորման վերաբերյալ դրույթները, ինչի արդյունքում ստացվում է, որ ցանկացած անձ կարող է լինել սնանկության գործերով կառավարիչ և տնօրինել, վաճառել այլ անձանց գույքը, ինչն անընդունելի է: Այդ առումով առաջարկում ենք նախագծում սահմանել պետական լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով սնանկության գործերով կառավարիչների որակավորմանը վերաբերող դրույթներ:	Ընդունվել է:	Նախագծի 18-րդ, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 24-րդ, 106-րդ հոդվածները խմբագրվել են, մասնավորապես սնանկության գործերով կառավարիչների լիցենզավորման վերաբերյալ դրույթների փոխարեն նախատեսվել է ՀՀ կառավարության սահմանած կարգի համաձայն կառավարիչների որակավորմանը վերաբերող դրույթներ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ա. Մինասյան	1. Առաջարկվում է նախագծի 34-րդ հոդվածը հստակեցնել, քանի որ պարզ չէ, թե արդյոք պարտատոմսերը և մուրհակները հանդիսանում են վճարային պահանջի իրավունք վկայող արժեթղթեր: 2. Նախագծի 18-րդ և 19-րդ հոդվածներում «օրենքով սահմանված կարգով գրանցված (հաշվառված) է որպես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող հարկ վճարող» բառեր առաջարկվում է փոխարինել «օրենքով սահմանված կարգով հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր» բառերով:	Ընդունվել է: Ընդունվել է:	1. Նախագծի 34-րդ հոդվածից հանվել են «(պարտատոմսեր, մուրհակներ)ե բառերը: 2. Նախագծի 18-րդ և 19-րդ հոդվածներում «օրենքով սահմանված կարգով գրանցված (հաշվառված) է որպես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող հարկ վճարող» բառեր փոխարինվել են «օրենքով սահմանված կարգով հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր» բառերով:
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ս. Սաֆարյան	1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 26-րդ հոդվածում «չներառած» բառի փոխարեն գրել «չներառելով» բառով: 2. Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ կետում «որոշում է դատարանը» բառերից հետո ավելացնել «աշխատաժամանակին և կատարած աշխատանքին համապատասխան՝ աշխատանքային օրենսդրության սկզբունքներից ելնելով» բառերը: 3. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի 3-րդ մասում ««ա» կետով» բառերի փոխարեն գրել ««ա» կետի 2-րդ պարբերությամբ» բառերը: 4. Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետում «քաղաքացիական» բառից հետո գրել «կամ վարչական» բառերը: 5. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասում «կատարված» բառից հետո ավելացնել «, սակայն» բառը:	Ընդունվել է: Ընդունվել է:	1. Նախագծի 26-րդ հոդվածում «չներառած» բառի փոխարենվել է «չներառելով» բառով: 2. Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ կետում «որոշում է դատարանը» բառերից հետո լրացվել են «աշխատաժամանակին և կատարած աշխատանքին համապատասխան՝ աշխատանքային օրենսդրության սկզբունքներից ելնելով» բառերը: 3. Գրության 3-րդ, 4-րդ և 5-րդ կետով նախատեսված առաջարկությունները վերաբերում է գործող օրենքին, այլ ոչ թե Նախագծին, ուստի և չեն հանդիսանում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված նախագծի կարգավորման առարկան և անհրաժեշտության դեպքում կարող են կարգավորվել այլ նախագծով: